ԴԱՐՁԱԿ ՀԱՎԵՐԺՈՒԹՅՈՒՆ

Երբ մահը մոտենում էր իր կենսական ուժերը գրեթե սպառած Վեհափառին, նա փիլիսոփայական անդորրությամբ շշնջում էր. «Ես դեռ երկա՞ր պետք է ապրեմ»: Սա իրողություն է, որի վկաներից ոմանց լսածը թվում էր ծերունական միամտություն, այլոց՝ ոչ պարզ ըմբռնելի երկիմաստություն: Իսկ իրականում այն ինքնագիտակցության հաստատումն էր, որ նման մի բացառիկ անձի մահը սոսկ սկիզբն է նրա անմահության: Դրան Վեհափառն արժանացել է իր ժողովրդի համար մտածածով և կատարածով: Այսօր մենք բոլորս ազգովի դրա պատմական վկաներն ենք:

Մարդ էակի շատ սահմանումներ կան իմաստասերների գործերում սկսած Արիստոտելից մինչև մեր օրերը՝ բանական կենդանի, արտադրության միջոցներ պատրաստող և դրանցից օգտվող կենդանի և այլն: Երևանական թվականներին գրված «Մեր հայրենիքը» հոդվածում Վեհափառն առավելությունը տալիս էր «Մարդը այն կենդանին է, որ գիտե հարցումներ տալ» սահմանմանը: Երբ զրույցներից մեկի ընթացքում Վեհափառի ուշադրությունը հրավիրվեց այն իրողության վրա, որ հարցումների տեսությունը ժամանակակից փիլիսոփայական, տրամաբանական առաջատար տեսություններից է, նա նկատեց, որ այդ խնդիրը սոսկ գործնական նշանակությամբ է շոշափել: Կարելի էր կարծել, որ պատասխանը իրեն հատուկ, բացառիկ համեստությամբ է պայմանավորված: Սակայն պատասխանը միայն դրանով չէր կարելի բացատրել: Այն ավելի խոր պատճառներ ուներ: Այդ նույն հոդվածում Վեհափառը գրում է. «Կը սկսի տառապանքը մարդուն, տառապանքը հարցումներուն, գուցե ամենեն մարդկայինը բոլոր տառապանքներուն»: Եվ ապա՝ «Արդյոք, կա՞ ավելի տառապած ժողովուրդ մը, քան հայ ժողովուրդը: Հետևաբար, ո՞վ արդյոք պիտի կրնա չափել խորությունը անոր հոգեկան տառապանքին, անոր խռովքին ու տագնապին: Անշուշտ, մեր հետպատերազմյան հայ կյանքը կապասե դեռ իր «նոր տառապանքի երգիչը», իր «նոր տագնապի» փիլիսոփան»:

Այդպիսի փիլիսոփա ինքը՝ Վեհափառը դարձավ և ձեռնամուխ եղավ տալու իր ժողովրդին հուզող հարցերի պատասխանը, լուծելու իր ազգի կող-

ից առաջադրված հարցումները: Ժողովուրդն էլ ազգովի նրան սիրեց պաշտամունքի չափ: Իսկ իր փիլիսոփա գործընկերները նրան ընտրեցին Հայոց փիլիսոփայական ակադեմիայի առաջին պատվավոր անդամ, Հայկական փիլիսոփայական ընկերության պատվավոր անդամ՝ թիվ մեկ, և ի ամփոփումն նրա գիտական ողջ վաստակի, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան Վեհափառին հռչակեց պատվավոր անդամ, պատվավոր ակադեմիկոս:

Իր անցողիկ կյանքում արդեն Վեհափառը ձեռք էր մեկնել հավերժությանը: Ստույգ կլիներ ասել՝ հավերժությունն էր ձեռք մեկնել նրան: Այսօր նա ձուլվեց հավերժությանը: Ինքը դարձավ հավերժություն: Եվ նա հավերժ կմնա իր ժողովրդի, իր ազգի հավաքական հիշողության, հոգու, մտածմունքների ու սիրո անանց աշխարհում:

ԳԵՎՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆ
ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ